Նման պայմաններում պարզ է դառնում, որ անգործության ժամկետը, կամ որ նույնն է՝ հայցային վաղեմության ժամկետը, սպառվել է 06.11.2023 թվականին:

Դատարանը փաստում է, որ հայցադիմումը Դատարանի գրասենյակում մուտքագրվել է 08.11.2023 թվականին, ինչն արձանագրվել է նաև հայցադիմումը վարույթ ընդունելիս:

Այնուամենայնիվ, «Հայփոստ» ՓԲ ընկերության կողմից 06.11.2023 թվականին տրված ստացականի պատճենի հետազոտման արդյունքում Դատարանն արձանագրում է, որ հայցադիմումը փաստային ծառայությանն է հանձնվել 06.11.2023 թվականին:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված:*

Նշված իրավանորմի բովանդակությունից ուղղակիորեն բխում է, որ 06.11.2023 թվականին փաստային ծառայությանը հանձնված հայցադիմումը պետք է համարվի Դատարան ներկայացված 06.11.2023 թվականին, ինչը նշանակում է, որ հայցը Դատարան է ներկայացվել հայցային վաղեմության ժամկետի պահպանմամբ:

Նման պայմաններում Դատարանը գտնում է, որ հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդությունը ենթակա է մերժման:

<u>Դատական ծախսերը.</u>

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ *դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *պետական տուրքի գանձման օբյեկտները, պետական տուրքի չափը և վճարման կարգը սահմանվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:*

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենքով սահմանված պետական տուրքը Հայցվորի կողմից վճարվել է նախապես, ինչպես նաև այն, որ հայցը ենթակա է մերժման, Դատարանը գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 194-րդ հոդվածներով, 234.12-րդ հոդվածի 1-ին մասով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1/. «Ռուբուշ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցն ընդդեմ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի՝ թիվ «ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-23/78» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրությամբ «Ռուբուշ» ՍՊ ընկերության հայտը մերժելու մասին որոշումը և

«ՎԱԼ+ԱԼ» ՍՊԸ - «ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ կոնսորցիումին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, մերժել ամբողջությամբ:

2/. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի ներկայացուցչի միջնորդությունը՝ հայցային վաղեմություն կիրառելու մասին, մերժել:

3/. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

Կամովին չկատարվելու դեպքում, կատարում ենթադրող մասով վճիռը կարող է կատարվել Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Դատավոր՝ Հովհաննես Ղազարյան